Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Երաժշտություն

Թեմա՝ Մանկական նվագարանների արդիականությունը երաժշտության դասին

Կազմեց՝ Անահիտ Մկրտչյան
Զագիկավանի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Կապան 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը միշտ դիտվել է որպես մարդու զարգացումն ապահովող հիմնաքար: Պատահական չէ այն կարծիքը, որ կրթությունը շարժվում է զարգացման առջևից, վերջինս էլ ապահովում է կրթության և դաստիարակության առաջընթացը:

Հանրակրթական դպրոցում դրվում է աշակերտների երաժշտական դաստիարակության հիմքը: Այդ դասարաններում են ձևավորվում և զարգանում սովորողների երաժշտական ընդունակությունները, կարողությունները, հմտությունները և արժեքային համակարգը, ինչպես նաև երաժշտական արվեստի և կյանքի նկատմամբ սովորողների զգայական, գեղագիտական և ճանաչողական վերաբերմունքը:

Հոգեբան-մանկավարժ Գարդների «Բազմաբնույթ մտածողության տեսությունը»: Ըստ այդ տեսության Գարդները համոզված է, որ մարդուն հատուկ են մտածողության, ընկալման և իմաստավորման բազմապիսի ձևեր: Ուսուցումը պետք է ուղղված լինի մարդու հատուկմտածողությունների բավարարմանը: Իսկ մտածողության հիմնական ձևերը ըստ մանկավարժի տեսության 7ն են՝

- ✓ լեզվական
- ✓ տրամաբանական-տարածական
- ✓ մարմնաշարժողական
- ✓ երաժշտական
- ✓ միջանձնային
- ✓ ներանձնային

Հանրակրթական դպրոցի երաժշտության դասն ունի համալիր կառուցվածք: Այս դասին երեխաները զբաղվում են երաժշտական գործունեության մի շարք տեսակներով: Դրանք են՝ երգեցողություն, երաժշտության ունկնդրում, երաժշտառիթմական շարժում, իմպրովիզացիա և մանկական նվագարաններով կատարում:

Երաժշտության ընկալման և զարգացման համար արդյունավետ միջոց է համարվում մանկական նվագարաններով կատարումը, ինչ էլ փորձել ենք հետազոտության ժամանակ փորձարկել:

Մանկական նվագարաններից են թմբուկը, դափը, եռանկյունին, մարակասները, չխկչխկանները, մետաղաֆոնը, ռիթմական փայտիկները, զանգակը, զանգուլակը և այլ: Երաժշտական գործիքներով նվագը կարող է արդյունավետ,

ինչպես նաև նպատսավոր պայմաններ ստեղծել սոցիալականացման համար: Այն ուղղված է երեխայի

- ✓ տրամաբանական մտածողության զարգացմանը
- ✓ երաժշտական լսողության զարգացմանը
- ✓ ռիթմի զգացողության զարգացմանը
- ✓ ձեռքի մանր մոտորիկայի զարգացմանը
- ✓ ձայների և հնչյունների տարբերակման կարողության ձևավորմանը
- ✓ երևակայության և հիշողության զարգացմանը

Իվերջո, երբ աշակերտը ինքն է դառնում մասնակիցը և երբեմն նույնիսկ վարողը, նա առավել հետաքրքրված է լինում դասապրոցեսի ընթացքին, իսկ ուսուցանված նյութն էլ ինքնին դառնում է հեշտ ընկալվող:

Հետազոտական աշխատանքի ժամանակ հենվելով մի շարք երաժիշտ-մանկավարժների տեսությունների վրա, ներկայացնում ենք մանկական նվագարանների կատարման արդյունավետությունը երաժշտության դասին:

Երեխայի երաժշտական կարողությունները զարգանում և ձևավորվում են երաժշտական ակտիվ գործունեության ընթացքում: Հետևաբար պետք է ճիշտ կազմակերպել և ուղղորդել այն, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Վերջինս էլ հենց հանդիսանում է ուսուցչի խնդիրը դասի կազմակերպման ժամանակ: Բազմաթիվ երաժիշտ-մանկավարժներ, ի դեմս գերմանացի կոմպոզիտոր և երաժիշտ-մանկավարժ Կառլ Օրֆի,[1] ով մշակել է երաժշտական դաստիարակության մի համակարգ, որի համար հիմք է հանդիսանում երեխաների ստեղծագործական կարողությունները, նշում են մանկական նվագարաններով նվագի կատարման կարևորության մասին:

Առհասարակ երաժշտական գործիքներից որևէ մեկին տիրապետելը խթանում է երեխայի մաթեմատիկական կարողությթունների զարգացմանը, ձևավորելով տարածական մտածողությունը և հիշողությունը:

[1]Կառլ Օրֆ/1895-1982/-Գերմանացի կոմպոզիտոր, երաժիշտ-մանկավարժ: Մեծ ավանդ ունի երաժշտական կրթության զարգացմնա գործում:

Գիտական համատեքստ

Յուրաքանչյուր երաժշտական գործիք, այդ թվում նաև մանկական երաժշտական գործիքները, իդեմս ռիթմական նվագարաններին:

Մանկական նվագարանները կարելի է բաժանել երկու խմբի, մի խումբը ունի բարձրություն, մյուս խումբը իր ձայնով «աղմուկ» է հիշեցնում: Հնչեղ են քսիլոֆոնը, զանգուլակը: Իսկ թմբուկ, դափը, եռանկյունին, մարակասը չունեն ձայնի բարձրություն:

Այսպես.

Զանգուլաներ – Հարվածայի գործիք է: Իրենից ներկայացնում է մետաղյա ձող, որը թեքված է հավասարաչաթ և ունի եռանկյան տեսք: Գործիքի ձայնը նման է զնգոցի/ թեթև է, պայծառ, բյուրեղյա/: Եռանկյուն նվագողը պետք է կատարման որոշակի հմտություն ունենա:

Թմբուկ – հարվածային գործիք:Լինում են մեծ կամ փոքր, որոնք տարբերվում են հնչերանգով: Մանկական նվագարաններում օգտագործում են փոքրը: Այն ունի բարձր, հստակ հնչողություն:

Մարակաս, մարակա, մարակասներ - հնագույն հարվածաղմկային երաժշտական գործիք, որի ձայնարտաբերումը թափահարումով է: Նվագողը, որպես կանոն, օգտագործում է մեկ զույգ մարակա՝ յուրաքանչյուր ձեռքում՝ մեկը:

Քսիլոֆոն – Խրոմատիկ դասավորվածությամբ փայտե կամ մետաղյա թիթեղներից: Նվագում են փայտյա կամ կաուչուկե փայտիկներով: Ձայնը կարճ է, չոր, հնչեղ:

Դափ, դահիրա, տամբուրե - հարվածային երաժշտական գործիք: Կազմված է փայտյա կլոր, ոչ լայն շրջանակից՝ մի կողմը պատած կաշվե թաղանթով: Գործիքը նվագում են թափահարելով, մատներով, ձեռքի ափերով զարկելով թաղանթին: Դափ նվագողը պետք է տիրապետի մատնահարվածների տեխնիկական վարպետության:

Կաստանիետներ – հարվածային երաժշտական գործիք: Կազմված է երկու զույգ փայտե կամ պլաստմասսե խեցաձև սկավառակից: Յուրաքանչյուր զույգը կապված է քուղե օղակով:

Հետազոտության համատեքստ

Մանկական նվագարաններով նվագը թույլ է տալիս զարգացնել երեխաների ընդունակություններուն ու կարողությունները, հենվելով երգելու, նվագելու և շարժումների համակարգված գործընթացի վրա:

Երեխաների հետաքրքրությունը երաժշտական գործիքների հանդեպ մեծ է: Առաջին անգամ տեսնելուց էլ թե՛ տարրական, թե՛ միջին դասարանի աշակերտները ցանկանում և փորձում են նվագել: Այդ անսպառ հետաքրքրությունն էլ հենց կարիելի է օգտագործել աշակերտների երաժշտության դասի հանդեպ հետաքրքրության առաջացման համար:

Պետք է նշել, որ նույնիսկ ամենապարզ նվագարանի առկայությունը երեխայի ձեռքին արդեն իսկ գրավիչ է երեխաների համար, միանգամից առաջացնում է հետաքրքրություն: Իսկ գործիքը նվագելու գործընթացը, եթե անգամ նա դրա միջոցով նվագում է ռիթմը կամ ցույց է տալիս ստեղծագործության զարկերը, երեխային դարձնում է կատարող: Աշակերտը/երեխան/ կլանվում է երաժշտության կատարման գործընթացի մեջ, քանի որ նա պետք է լսի, հարմարվի, նվագի բոլորի հետ միասին ու հավասար, հարմարեցնելով իր զգացմունքայնությունը, հարմարեցնի իր կատարումը և զգա երաժշտությունը:

Մանկական երաժշտական գործիքները ասես զենք լինեն: Երեխայի ձեռքին նույնիս ամենապարզ երաժշտական գործիքը, որի վրա նա նվագում է կամ ցույց է տալիս երաժշտության զարկերը, անմիջապես կլանում է նրան և երեխայի և ունկնդրի ուշադրությունը արագ սևեռվում է դեպի գործիքի կատարումը:

Մանկական նվագարաններով նվագելու գործընթացի ժամանակ կատարելագործվում են երեխայի ռիթիկան, գեղագիտական զգացումները և գեղարվեստական ընկալումը: Նվագարաններով կատարումը նպաստում է նաև կամային այնպիսի հատկությունների ձևավորմանը և զարգացմանը ինչպիսիք են տոկունությունը, հաստատակամությունը, նպատակասլացությունը, հիշողությունը կենտրոնացնելու կարողությունը:

Նվագարաններով կատարմանը մեծ տեղ էր տալիս Կոմիտասը. Նա իր «Պարն ու մանուկը» հոդվածում ներկայացնում է. «Վայրենիի պարը պարզ է եւ կարտայայտէ իր կեանքը, ան ինքնապաշտպանութեան և ապրուստի վրայ միայն կը խոհի, եւ ասոնք են այդ պարին էական տարրերը: Ան իր զգացումները արտայայտելու համար պարի շարժումներուն կընկերակցնէ հասարակ նուագային գործիքներ- թմբուկ, քարէ և մետաղէ շինվածքներ. Մարդ մը, ազգ մը որքան

զարգանայ: նոյն չափով զարգացած երեւան կու գան պարն ալ, նուահն ալ, ինչպէս նախնական թմբուկը օպերայի մէջ դարձած է ամէն ձայն զգացնող գործիքը»[3-էջ76]

Մեծն մանկավարժ Կոմիտասի ուսմունքի վառ օրինակն է նրա 7 պարը՝ գրված դաշնամուրի համար. Կոմպոզիտորը յուրաքանչյուր պարի սկզբում նշել է, թե հայկական ժողովրդական որ նվագարանի ոճով պետք է կատարել ստեղծագործությունը/օրինակ՝ դափ, թառ, բլուլ և այլն/:

Կատարված փորձառությամբ նկատելի կլինի այն, որ մանկական նվագարաններով կատարումները երաժշտության դասին մատչելի են դարձնում նոր ուսուցնավող նյութի ընկալումը, առավել տպավորիչ են դարձնում որոշ ունկդրման նյութեր/ այստեղ պետք հաշվի առնել այն հանգամանքը, որ նվագարաններով նվագակցվում են նաև այն ստեղծագործությունները, որոնք պետք է ունկնդրվեն երաժշտության դասին/:

Գործնական համատեքստ

Ըստ կատարվող հետազոտության, աշակերտների մոտ ստեղծվող փոխհամագործակցային մթնոլորտի միջոցով նախ կձևավորվի «երաժշտություն» առարկայի նկատմամբ սովորողի հետաքրքրությունը: Երաժշտական գործունեության այս միջոցի հիմնական շեշտը դրվում է նրանում, որ դպրոցականները սովորում են կատարել պարզ ռիթմիական նվագակցություն, երաժշտական ստեղծագործության մեղեդուն զուգահեռ և համահունչ: Նվագակցությունը պետք է լինի արտահայտիչ և երաժշտության տարամդրությանը համապատասխան: Մատչելիությունը կայանում է նրանում, որ մանկական նվագարաններով կատարում է հարմար է բոլոր երեխաների համար՝ առանց բացառությունների: Աշակերտները ակտիվերոն են մասնակցում համատեղ գործիքային երաժշտարվեստին: Երաժշտական թույլ ունակություններ ունեցող երեխաների մոտ աստիճանաբար կարգավորվում է ռիթմական զգացումը, երաժշտականությունը: Երեխաները դառնում են առավել ակտիվ և ինքնավստահ իրենց կատարման ժամանակ:

Մանկական երաժշտական գործիքներով կատարումները դասերի ընթացքում թույլ կտան կատարել իմպրովիզացիաներ, գտնել յուրաքանչյուրի համար իր ռիթմը, իր մեղեդինև ստեղծագործել: Ինչպես նաև ընտրել պարզ նվագակցություններ և կատարել պարզ երգեր և ստեղծագործություններ:

Նախևառաջ երեխաներին պետք է ծանոթացնել երաժշտական գործիքների հետ, նրանց կատարման տեխնիկային և յուրաքանչյուր գործիքի տեմբրային առանձնահատկություններին:

Մանկական նվագարաններով կատարել սովորելու ընթացքը իր մեջ ներառում 3 փուլ.

- ✓ Երեխաները ունկնդրում և հիշում են մեղեդիները, երգում դրանք և ծանոթանում նվագելու տեխնիկային
- ✓ լսողությամբ կատարում են համահունչ նվագակցություն
- ✓ կատարում են ըստ նվագակցության

Երաժշտական կատարումից առաջ պետք է երեխաների հետ քննարկել և պարզաբանել, թե ինչ գործիքներով է պետք կամ կարելի կատարել: Պետք է հաշվի առնել մի փաստ, որ երեխաների հետ ընտրված ստեղծագործությունները

անհրաժեշտ է ընտրել ըստ իրենց արդեն ծանոթ ռիթմական պատկերով, կամ հենց նոր նյութի անցկացման ժամանակ, ամրապնդման նպատակով:

Ծանոթությունը երաժշտական գործիքների հետ պետք է կատարել նախևառաջ ռիթմական/հարվածային/ նվագարանների միջոցով: Այսինքն այն նվագարանների որոնք չունեն հնչյունային բարձրություն: Դրանք են թմբուկը, զանգուլակները, դափը, մարակասները,եռանկյունին, ծնծղան:

Ծանոթանալով վերևում նշված գործիքների հետ, կկատարեն պարզ ռիթմական վարժություններ, որի ռիթմը կցուցադրվի կամ կներկայացվի ուսուցչի կողմից: Ռիթմի ցուցադրելուց և ներկայացնելուց հետո աշակերտները կընտրեն իրենց համար նվագարան և կկատարեն ռիթմական վարժությունը, որը կցուցադրվի տեսանյութի տեսքով: Միևնույն ստեղծագործությունը կատարելով որոշակի անգամ, կախված, ուշադրությունից, կենտրոնացվածությունից: Այստեղ կարևոր է նաև երաժշտության ունկնդրումը:

Սա էլ սկիզբն է այն համոզմունքի, որ նվագարաններով կատարումը ձևավորում է աշակերտների մոտ ուշադրություն, հիշողությունը և լսողությունը:

Հետազոտական համատեքստ

Հետազոտությունն իրականացվեց Ձագիկավանի միջնակարգ դպրոցում երկրորդ, երրորդ և չորրորդ դասարաններում, «Երաժշտություն» առարկայի ժամանակ, երկրորդ դասարանում 8 դասաժամի ընթացքում, մյուս դասարաններում 2ական դասարաժամերի ընթացքում:

Հետազոտության նպատակն էր մանկական նվագարանների միջոցով աշակերտների երաժշտության դասի հանդեպ

- ✓ հետաքրքրվածության ստեղծումը
- ✓ մոտիվացիան և ակտիվությունը
- ✓ նյութի ընկալման արդյունավետ միջոցի օգտագործումը

Նվագարաններով նվագակցելու և երգին զուգահեռ կատարելու ստեղծագործությունները ընտրվեցին հաշվի առնելով աշակերտների պատրաստվածությունը և ընդունակությունները:
Նախ կատարեցինք նման մի վարժություն, ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով: / https://www.youtube.com/watch?v=jYkT0hGTYJM

Որպես դասի նախաբան երկրորդ դասարանում ներկայացվեցին երաժշտական ռիթմական նվագարանները, որոնցից որոշներին աշակերտներին ծանոթ էին արդեն առաջին դասարանից: Կատարեցինք նախավարժանք https://www.youtube.com/watch?v=17wC8KoaXto / :

Նվագարանները ցուցադրելուց և նվագելու տեխնիկան ցուցադրելուց հետո կատարվեցին պարզ ռիթմական վարժություններ կազմված կարճ և երկար հնչյուններից: Այսինքն. քառորդ և ութերորդական նոտաներից բաղկացած/♩ և ♪ / : Կատարեցինք նվագակցության մի տարբերակ օգտագործելով բնական նվագարնները: Ամրապնդելու նպատակով ռիթմիկ պատկերով կատարումը առավել հարմար էր և ծրագրային էր «Արև, արև» հայկական ժողովրդական երգը: Այն նաև կատարեցինք նվագարաններով, ցուցադրելով նախ ռիթմը, հետո զարկերը, ապա նոր ստեղծեցինք նվագակցություն:

Այնուհետև հաջորդ դասին փորձեցինք համեմատաբար ռիթմիկ ստեղծագործություն ընտրել, որտեղ ցուցադրվում է ռիթմական պատկերեները և զուգահեռ պատկերվում է նվագարանը, որով պետք է կատարվի ստեղծագործությունը / https://www.youtube.com/watch?v=azUUvEOvmIc / :

Այնուհետև ուսուցանվեց նոր նյութը /«Նախշուն կաքավ, կաքավիկ» հայկական ժողովրդական երգը/, ուկնդրումից և երգը ուսուցանելուց հետո աշակերտները ցուցադրեցին նախ երգի ռիթմը միայն թմբուկի օգնությամբ, ապա ցույց տալով երգի զարկերը: Բաժանվելով խմբերի փորձեցինք ստեղծել նվագակցողների, երգողների և պարողների միասնական մի խումբ:

Չորրորդ դասարանում աշակերտները ուսուցանված երգին համապատասխան ստեղծեցին նվագակցություն, որը կատարեցին խմբերի բաժանվելով: Չորրորդ դասարանում սովորում են 3 աշակերտ այդ իսկ պատճառով, յուրաքանչյուր աշակերտ ինքն իրեն նվագակցելով կարող է երգել: Որպես նախավարժանք, կատարեցինք Լեռոյ Անդերսոնի[2] ստեղծագործություններից: //www.youtube.com/watch?v=CS0AYKCDSzg /:

Ռիթմական նվագարանները աշակերտների համար Ա. Խաչատրյանի «Ժողովրդական ոգով» ստեղծագործությունում, կոմպոզիտորը շեշտերով ընդգծել է երաժշտության արտահայտիչ մասերը, որոնք էլ հնչում են սկզբում դհոլի, իսկ հետո՝ նաև դափի կատարմամբ:

[2]Անդերսոն Լեռոյ-Ամերիկացի կոմպոզիտոր, դիրիժոր: Հեղինակ է մի շարք երաժշտական հումորային ստեղծագործությունների, որոնցից մեկը «Պիես գրամեքենայի համար» :

Եզրակացություն

Ամփոփելով ստացված արդյունքները եկա այն եզրահանգման, որ ռիթմական նվագարաններ օգնությամբ և դրանց միջոցով աշակերտների ներգրավվածություն դասին, նրանց ընկալունակությունը առավել արդյունավետ է լինում: Մանկական նվագարանների կիրառումը դասի ժամանակ աշակերտների մոտ ձևավորեց.

- Ակտիվությունը «երաժշտության» դասին
- ✓ ինքնավստահություն
- ✓ էմոցիոնալություն
- ✓ համբերատարություն

Եվ վերջապես նկատելի էր աշակերտների պարզապես ուրախությունը իր իսկ կատարած նվագակցության գոհունակությունը կամ էլ հակառակը քննադատություն իր կատարած աշխատանքի նկատմամբ:

Այսպիսով կարելի է նկատել, որ մանկական նվագարանները արդյունավետ միջոց են երգացանկի դյուրին յուրացմանը, երաժշտական ընդունակությունների և կատարողական հմտությունների ակտիվ զարգացման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գևորգյան Ա - Ռիթմիկա:Մեթոդական ձեռնարկ-Եր.:Մեկնարկ,2022.-80էջ
2. Գևորգյան Ա.: Երաժշտամանկավարժական տեխնոլոգիաներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ/ Ա. Գևորգյան.-Եր.: Արտագերս, 2015.-120էջ
3. Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ և յոդուածներ, 2 գրքով, գիրք Բ, Աշխատասիրութեամբ Գուգէն Գասպարեանի եվ Մարինք Մուշեղեանի,-Երևան: «Սարգիս Խաչենց-Փրինթինֆո»,2007թ-576էջ
4. Յուզբաշյան Յու. Վ., Փահլևանյան Ա.Ա., Ավետիսյան Վ.Հ.: Երաժշտությունը 1-ին դասարաններում:/ Ուսուցչի մեթոդական ձեռնարկ. - Եր.: «Զանգակ-97», 2008.-118էջ
5. Orff,Carl. Ein Bericht inWort und Bild, 2 Aufl. / Carl Orff. - Mainz, 1960

Հավելված

Դասարան	7
Տևողություն	45րոպե
Թեմա	Ազգային երգ ու պար
Դասի տեսակը	Համակցված դաս
Նպատակը	✓ Ձևավորել ազգային երաժշտության վերաբերյալ պատկերացումներ ✓ Ձևավորել և զարգացնել գիտելիքներ ազգային պարերի և պարերգերի ծագումնաբանության և զարգացման մասին
Խնդիրները	Ծանթացում և ազգային մշակույթի պահպանում
Վերջնարդյունք	✓ Մեկնաբանի հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները: ✓ Ներկայացն ազգային երգ ու պարի ծագումնաբանությունը և զարգացումը հետազոտական կամ նախագծային աշխատանքներով:
Գործունեության ձևերը	✓ Ուսումնասիրել ազգային երգ ու պարի ծագումնաբանությունը և զարգացումը: ✓ Դիտել համապատասխան տեսահոլովակներ: ✓ Սովորեցնել ազգային պարային տարրեր, ամբողջական պարեր և պարերգեր:

Միջառարկայական կապ	Հայոց պատմություն, հայ գրականություն
Ուսումնական նյութեր	Դասագիրք, ձայնագրություն, տեսանյութ
Խաչվող հասկացություններ	Անհատ և հարաբերություններ
Ընթացք	Ունկնդրում Նյութի ներկայացում Տեսանյութի ներկայացում Պարի ուսուցանում
Գնահատում	Ձևավորող
Տնային հանձնարարություն	Ամրապնդել նոր ուսուցանված նյութը
Անդրադարձ	Ի՞նչ սովորեցի / Ի՞նչ գիտեի

Դասի պլան 2

Դասարան	2
Տևողություն	45րոպե
Թեմա	Երգ
Դասի տեսակը	Կարողությունների և հմտությունների ձևավորման և ամրապնդման դաս
Նպատակը	✓ Ձևավորել գիտելիքներ երաժշտության ամենապարզ ժանրերի (տեսակների) մասին: ✓ Ձևավորել կարողություններ դրանք ունկնդրելու, ընկալելու, կատարելու և ներկայացնելու համար:
Խնդիրները	Տարբերակել երաժշտության ամենապարզ տեսակները
Վերջնարդյունք	✓ Լսողությամբ տարբերի երաժշտության տեսակը ✓ Երգի մենկա կամ խմբով հայ ազգային կամ այլ ազգերի պարզ մանկական երգեր
Գործունեության ձևերը	✓ Ունկնդրում ✓ Ուսուցանում ✓ Կատարում
Միջառարկայական կապ	Մայրենի
Ուսումնական նյութեր	Դասագիրք, ձայնագրություն, բնական նվագարաններ, ռիթմական նվագարաններ
Խաչվող հասկացություններ	Օրինաչափություն
Ընթացք	Կազմակերպչական մաս-վերհիշել ով է կոմպոզիտորը, ով է բանաստեղծը կամ գրողը Երաժշտության տեսակների

	ներկայացում Ուկնդրման միջոցով տարբերակել երաժշտության տեսակները և առանձնացնել «երգ» տեսակը Ունկնդրել Կոմիտասի «Կաքավիկի երգը» ստեղծագործությունը Ուսուցանել «Կաքավիկի երգը» Ներկայացնել Կոմիտաս կոմպոզիտորի ստեղծագործական ուղին
Գնահատում	Բնութագրող
Տնային հանձնարարություն	Փորձել հորինել ռիթմական նվագակցություն սովորած երգի համար
Անդրադարձ	Ո՞վ էր Կոմիտասը / Ի՞նչ է երգը

Դասի պլան 3

Դասարան	2
Տևողություն	45րոպե
Թեմա	Երգի տեսակները
Դասի տեսակը	Գիտելիքների համակարգման և ընդհանրացման դաս
Նպատակը	✓ Ձևավորել գիտելիքներ երաժշտության ամենապարզ ժանրերի (տեսակների) մասին: ✓ Ձևավորել կարողություններ դրանք ունկնդրելու, ընկալելու, կատարելու և ներկայացնելու համար:
Խնդիրները	Տարբերակել երաժշտության ամենապարզ տեսակները
Վերջնարդյունք	✓ Լսողությամբ տարբերի երաժշտության տեսակը ✓ Երգի մենակ կամ խմբով հայ ազգային կամ այլ ազգերի պարզ մանկական երգեր ✓ Բացատրի ստեղծագործության բովանդակությունը, բնույթը, տեմպը, դինամիկան, իր տպավորություններն ու զգացողությունները ներկայացնի գույներով կամ նկարելով:
Գործունեության ձևերը	✓ Ունկնդրում ✓ Ուսուցանում ✓ Կատարում
Միջառարկայական կապ	Մայրենի
Ուսումնական նյութեր	Դասագիրք, ձայնագրություն, բնական

	նվագարաններ, ռիթմական նվագարաններ
Խաչվող հասկացություններ	Օրինաչափություն
Ընթացք	Ունկնդրել երգեր և տարբերակել դրանց տեսակները Կատարել օրորոցային երգին համապատասխան շարժումներ Ուսուցանել «Արև, արև» հայկական ժողովրդական երգը և կատարել երգին համապատասխան ռիթմական նվագակցություն. Օգտագործել նաև ռիթմական նվագարաններ Ցույց տալ երգի նոտաները ձեռքի նշաններով
Գնահատում	Բնութագրող
Տնային հանձնարարություն	Կատարել երգը ձեռքի նշաններով
Անդրադարձ	Թվարկել ծանոթ երգերը և փորձել գուշակել դրանց տեսակները

Դասի պլան 4

Դասարան	7
Տևողություն	45րոպե
Թեմա	Ծիսական երգեր
Դասի տեսակը	Գիտելիքների և կարողությունների ստուգման և շտկման դաս
Նպատակը	✓ Ձևավորել հանրամատչելի երաժշտության վերաբերյալ պատկերացումներ ✓ Ձևավորել և զարգացնել գիտելիքներ ազգային պարերի և պարերգերի ծագումնաբանության և զարգացման մասին
Խնդիրները	Ծանթացում և ազգային մշակույթի պահպանում
Վերջնարդյունք	✓ Ներկայացնի ազգային երգ ու պարի ծագումնաբանությունը և զարգացումը հետազոտական կամ նախագծային աշխատանքներով • Ներկայացնի և արժևորի հայ ազգային մշակույթի ավանդույթները
Գործունեության ձևերը	✓ Ուսումնասիրել ազգային երգ ու պարի ծագումնաբանությունը և զարգացումը: ✓ Դիտել համապատասխան տեսահոլովակներ: ✓ Բեմադրել ժողովրդական որևէ ազանդույթ կամ ծես
Միջառարկայական կապ	Հայոց պատմություն, հայ գրականություն

Ուսումնական նյութեր	Դասագիրք, ձայնագրություն, տեսանյութ
Խաչվող հասկացություններ	Անհատ և հարաբերություններ
Ընթացք	Ունկնդրում Նյութի ներկայացում Տեսանյութի ներկայացում Պարի ընտրություն և փոքրիկ ծիասական բեմադրություն
Գնահատում	Ձևավորող
Տնային հանձնարարություն	Ամրապնդել նոր ուսուցանված նյութը
Անդրադարձ	Ես փոխեցի իմ վերաբերմունքը Ես իմացա, որ

Դասի պլան 5

Դասարան	5
Տևողություն	45րոպե
Թեմա	Ռոմանս
Դասի տեսակը	Նոր նյութի հաղորդման դաս
Նպատակը	✓ Ձևակերպել գիտելիքներ երաժշտության և արվեստի մյուս տեսակների մասին ✓ Ձևավորել երաժշտության և գրականության կապից առաջացած ժանրերը կատարելու և մեկնաբանելու կարողությունները
Խնդիրները	Տարբերակել ռոմանս ժանրը
Վերջնարդյունք	✓ Երգի խմբով երգեր, ռոմանսներ և խմբերգեր մաքուր ինտոնացիայով (նաև երկձայն), հստակ ռիթմով, նրբերանգներով, զարգացնելով մեղեդային գիծը: ✓ Վերլուծի երաժշտական նյութը
Գործունեության ձևերը	Ուսումնասիրել արվեստի տեսկաների փոխառնչությունը Վերլուծել երաժշտական կերպար Ներկայացնի ռոմանս ժանրը
Միջառարկայական կապ	Հայոց լեզու և գրականություն Իմ հայրենիք
Ուսումնական նյութեր	Դասագիրք, ձայնագրություն,
Խաչվող հասկացություններ	Օրինաչափություն
Ընթացք	Արվեստը և նրա տեսակները Ներկայացնել գրականության դերի, նշանակության մասին արվեստի ճյուղերում

	Ունկնդրել ստեղծագործություններ, որտեղ ակնառու է գրականության և երաժշտության կապը Ներկայացնել Ռոմանս ժանրը Ունկնդրել «Ախ, ինչ լավ են» ստեղծագործությունը
Գնահատում	Ձևավորող
Տնային հանձնարարություն	Վերլուծել և աղյուսակի միջոցով նշել երաժշտության և գրականության կապը
Անդրադարձ	Մեթոդ 3.2.1

Բովանդակություն

Ներածություն---------- 2
Գիտական համատեքստ---------- 5
Գործնական համատեքստ---------- 8
Հետազոտության համատեքստ---------- 10
Եզրակացություն---------- 12
Գրականության ցանկ---------- 13
Հավելված---------- 14